

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ԹՈՒՐԹԻԱՅԻՆ ՈՐՊԵՍ ԹՇՆԱՄԻ ՎԵՐԱԲԵՐՎԻ»

Posted on April 26, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Բագրատ Եստուկյան, Իսթամպուլ, 18 Ապրիլ 2021

Բագրատ Եստուկյանի Պոլսահայ յայտնի յառաջադեմ մտաւորականներէն մին է: Ծնած է 1953-ին, Պոլիս՝ ցեղասպանութենէն մազապուրծ փրկուած յարկի տակ: Յաճախած է Պոլսոյ Էսայեան եւ Միխիթարեան վարժարանները, ապա աւարտած է Պոլսոյ Կեդրոնական վարժարանը: Ան առաջին գործակիցներէն եղած է Հրանդ Տիկնի եւ մաս կազմած «ԱԿՕՍ»ի խմբագրական կազմին: Այժմ գլխաւոր խմբագիրն է նոյն թերթի հայկական բաժնի: 2017-էն սկսեալ ան կը գործակցի յունական «Աբոեւմատիսի» թերթի խմբագիր Միխայիլ Վասիլիատիսի հետ: Ելոյթներով հանդէս կու գայ Փարիզի «ԱՅՔ FM» ռադիոկայանէն եւ «ԱԿՕՍ ՌԱԴԻՕ»-էն (Պոլիս), միաժամանակ կը գրէ թուրքական «ԷՕԶԿԻՐԼԻԻԿԶԻԻ ՏԵՍՈՔՐԱՍԻ» թերթին մէջ (“Özgürlükçü Demokrasi”: Պրն. Բ. Եստուկյանի յայտարարութիւնը կու գայ Թուրքիոյ հանրապետութեան նախկին մայրաքաղաքէն: Մտաւորական պարկեշտութիւն եւ սկզբունքայնութիւն է պետք նման յայտարարութիւն մը հրապարակ նետելու համար: (Խմբ.)

«Զգիտեմ, թե Թուրքիան ցանկանում է Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորել, թե՛ ոչ, բայց ես արդէն չեմ ցանկանում»: [Tert.am](https://tert.am)-ի հետ զրույցում այսպես արձագանքեց Թուրքիայում հրապարակվող «Ակոս» շաբաթաթերթի հայերեն էջերի խմբագիր Բագրատ Եստուկյանը՝ անդրադառնալով ՀՀ իշխանությունների հայտարարություններին, որ պետք է շտկումներ անել հայ-թուրքական հարաբերություններում, որ պետք է գտնել հնարավորություններ այդ հարաբերությունների կարգավորումից:

«Ես այս պահին բացարձակապես չեմ ցանկանում հարաբերությունների կարգավորման գործընթաց, հատկապես երբ դրա մասին խոսվում հայկական կողմից, քանի որ այս վիճակին հասանք Թուրքիայի պատճառով: Հետևաբար՝ եթե բարեփոխում են ցանկանում, թող Թուրքիան իր դիրքորոշումը փոխի: Հայաստանն այս մասով բան չունի անելու: Ի՞նչ պետք է անի: 30 տարուց ավելի է՝ հայտարարում է, որ կողմ է սահմանների բացվելուն, հոժար է դրան, սակայն Թուրքիան է, որ Հայաստանին շրջափակման մեջ է պահել, և եթե ինչ-որ բան պետք է փոխվի, ապա դա Թուրքիայի քաղաքականությունն է», - ասաց նա:

Բագրատ Եստուկյանը նկատեց, որ Հայաստանն արդէն մեծ կորուստներ է ունեցել արցախյան պատերազմի ընթացքում և այս պահին էլ Թուրքիայից Հայաստանի նկատմամբ միխիթարող ոչ մի արտահայտություն չի հնչել: «Այս պարագայում ի՞նչ տեսակ ջանքեր պետք է գործադրվի Թուրքիայի կամ Ադրբեջանի նկատմամբ հարաբերություններ կարգավորելու համար», - ասաց Բ. Եստուկյան:

Հիմա էլ, նրա նկատումով, Թուրքիան շարունակում է սպառնալիքով խոսել Հայաստանի հետ, թե պետք է իրեն լավ պահի. իսկ ի՞նչ է դրան ի պատասխան Հայաստանն անում:

«Հայաստանը դրան պետք է պատժիչ պատասխան տա: Երբ Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ չունես, սահմաններիդ բաց չես, հետևաբար Հայաստանն էլ քեզ ասելու բան չունի, դու ո՞վ ես, որ ասես, որ պետք է Հայաստանն իրեն նորմալ պահի», - ասաց նա:

Հայաստանը, ըստ Բագրատ Եստուկյանի, ունի ներուժ հակադարձելու Թուրքիային, ինչպես՝ 30 տարի դիմադրել է շրջափակմանը: «Թուրքիան կարծում էր, որ այդպես Հայաստանին ծնկի է բերելու: Չկարողացավ հաջողել: Վերջապես անկախ պետականության մասին ենք խոսում: Այդ անկախ պետականությունը պետք է իր արժանապատվությունը բարձր պահի հատկապես թշնամի երկրների դեմ: Թուրքիան թշնամի է, դա շատ ակնհայտ դրսևորվեց արցախյան 44-օրյա վերջին պատերազմում», - ասաց նա:

Պոլսահայ խմբագիրը, այնուամենայնիվ նկատեց, որ Հայաստանը կարող էր և կարիք ունի տնտեսական հարաբերություններ հաստատել հարևան երկրի հետ, բայց այդ բոլորի համար նախևառաջ բարյացակամություն է պետք, քաղաքակիրթ վերաբերմունք:

«Թուրքիան այդ բոլորից զուրկ է: Այսօր Թուրքիան ամբողջ աշխարհի համար է վատ դիրքի մատնված շնորհիվ իր իշխանությունների: Հետևաբար՝ այս պահին Հայաստանը այս թեմայի վերաբերյալ պետք է լռի», - ասաց նա:

Պատասխանելով դիտարկմանը, թե հնարավո՞ր է, որ նման հայտարարություններով հայաստանյան իշխանությունները խոչընդոտեն Ցեղասպանության միջազգային ճանաչմանը, Բագրատ Եստուկյանը նշեց, որ դա իր համար ամենաանկարևոր թեման է:

«Միջազգային ճանաչում կոչվածն ինձ համար ազգի նպատակ չի կարող լինել: Ցեղասպանությունը եղել և վերջացել է: 1915 թվականին մենք ցեղասպանության ենք ենթարկվել շնորհիվ եվրոպացիների, թուրքերի, շնորհիվ Թուրքիայի մեջ բնակվող մահմեդական բոլոր ազգերի համագործակցության: Այդ ցեղասպանության մեջ իրենց մասնակցություն ունեն եվրոպական գերտերությունները, Խորհրդային Միությունը, որ անտեսեցին այն: Այսօր ինձ համար ոչ մի նշանակություն չունի այս կամ այն երկրի՝ Ցեղասպանության ճանաչումը: Գիտեմ, որ դրանք բոլորն էլ իրենց ինչ-որ քաղաքական շահերի համար են անում, իրենց առևտրի համար են անում, ուրիշ այլ իմաստ չկա, - ասաց Եստուկյանը՝ հավելելով, որ դրանց մեջ իր համար բացառություն է Գերմանիայի Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը, քանի որ բանաձևի մեջ Գերմանիան իր մեղքն էլ է ընդունում, - այսօր եթե ԱՄՆ-ի նախագահ Բայդենն էլ «Ցեղասպանություն» բառն օգտագործի, Թուրքիայի

հետ լարված հարաբերությունների պատճառով է անելու, այլ ոչ թե պատմական իրողությունը խոստովանելու համար»:

Ինչ վերաբերում է ՀՀ իշխանությունների՝ Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելուն միտված քաղաքականությանը, ապա, ըստ Բագրատ Եստուկյանի, այստեղ մեզ համար ամենամեծ վտանգը՝ ազգի արժանապատվության հարցն է:

«Եթե այս պահին մենք փորձ անենք Թուրքիայի հետ հարաբերություններ բարելավելու համար, ազգի արժանապատվությունը կոտնահարվի: Թուրքիան արժանի չէ այդ վերաբերմունքին այս իշխանության օրոք (ընդգծումը՝ keghart.org) Վաղը

իշխանությունը կփոխվի, քաղաքական կեցվածք կփոխվի, ըստ այդմ, Թուրքիայի կողմից մերձեցման ցանկություն կլինի, Հայաստանն էլ պատշաճ ձևով կփոխադարձի: Ես 30 տարի շարունակ ժողովուրդների բարեկամության մասին եմ խոսել, բայց այսօր այդ հանգրվանը չէ, այսօր այդ մասին չեմ խոսում, ընդհակառակը, Հայաստանը պետք է Թուրքիային որպես թշնամի վերաբերվի, որովհետև Թուրքան այդպես է վերաբերվում Հայաստանի հետ: *Ախմախություն* է այլ կեցվածք ընդունելը», - ասաց վերջում Բագրատ Եստուկյանը:

There are no comments yet.